Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ
Դրամավարկային քաղաքականության վարչություն

Դրամավարկային քաղաքականության հեռանկարներ

2024 թվականի 4-րդ եռամսյակի քաղաքականության շրջափուլի մոնիտորինգ

3 փետրվարի, 2025թ.

Սցենարների բազմություն

ԴՎՔ միջանկյալ որոշում

Սցենարների բազմությունն ամփոփող աղյուսակ

	Ա տիպի սցենարներին բնորոշ ռիսկեր	Բ տիպի սցենարներին բնորոշ ռիսկեր
Պահանջարկի ընդլայնում (Թողարկում + | Գնաճ +)	❑ **<u>ՀՀ չեզոք տոկոսադրույքի և դրա տարրերի շուրջ անորոշություններ.</u>** • *ԱՄՆ չեզոք տոկոսադրույքի մակարդակի շուրջ անորոշություններ:* Միջնաժամկետում հարկաբյուջետային խթանող դիրքի ընդլայնում իր հնարավոր ազդեցություններով ԱՄՆ-ի և հետևաբար նաև զարգացող երկրների (այդ թվում ՀՀ) չեզոք տոկոսադրույքների մակարդակի վրա: • *ՀՀ ռիսկ հավելավճարի մակարդակի հետ կապված անորոշություններ:* - <u>ՀՀ երկրի ռիսկ հավելավճարի արագ ճշգրտման (աճի) սցենարներ</u>, պայմանավորված տարածաշրջանային և ՀՀ շուրջ աշխարհաքաղաքական հակամարտությունների հնարավոր սրացման ռիսկերով, որոնք կհանգեցնեն տարածաշրջանի երկրների և ՀՀ սուվերեն ռիսկի հավելավճարների աճին, - <u>ՀՀ երկրի ռիսկ հավելավճարի հիմնարար մակարդակի աճի ուղղությամբ սցենար</u>: Հարկային եկամուտների հնարավոր թերհավաքագրումների շարունակման և սոցիալական և այլ բնույթի (ներուժային աճին չնպաստող) ծախսերի իրականացման անհրաժեշտությամբ պայմանավորված, միջնաժամկետում, սպասվածի համեմատ պարտքային բեռի զգալի մեծացում՝ երկրի ռիսկ հավելավճարի հիմնարար մակարդակի վրա հնարավոր ազդեցություններով: • *Կապիտալի հատույցի ավելացում:* Ներքին տնտեսությունում արձանագրվող բարձր տնտեսական աճը, հնարավոր է, արտացոլում է արտադրողականության, կապիտալի սահմանային հատույցի և չեզոք տոկոսադրույքի ավելի բարձր մակարդակը: ❑ **<u>Ներքին տնտեսությունում պահանջարկի պայմանների շուրջ անորոշություններ</u>.** • Երկարաժամկետ ներուժային մակարդակից բարձր տնտեսական աճը, որին հիմնականում նպաստում են ներքին պահանջարկի գործոնները արտացոլում են ավելցուկային պահանջարկի միջավայրի պահպանման ռիսկերը ՀՀ-ում: • Մասնավոր հատվածում կուտակված խնայողությունների հաշվին սպառման աճը, տնտեսության վարկավորման շարունակական բարձր աճը, ինչպես նաև արտահանման դրական զարգացումներից ածանցվող եկամուտների ավելացումը կարող են առաջիկայում ևս նպաստել պահանջարկի ընդլայնմանը, • Հարկաբյուջետային քաղաքականության սպասվածի համեմատ ավելի խթանող դիրքի ձևավորում՝ ներքին պահանջարկի ընդլայնման ուղղությամբ ռիսկերով**:** ❑ **<u>Գնաճային (փոխարժեքի) սպասումների հետ կապված անորոշությունների պահպանման պայմաններում տարբեր հնարավոր ցնցումների պարագայում դրանց վերևի ուղղությամբ ապախարսխման հնարավոր սցենարներ</u>**:	❑ **<u>Արտաքին պահանջարկի թուլացման հետ կապված ռիսկեր.</u>** • ԵԳ-ում և Չինաստանում կառուցվածքային խնդիրների առկայության և բարձր անորոշությունների պայմաններում ձևավորված թույլ ներքին պահանջարկի միջավայրի երկար պահպանում: • Արևմտյան պատժամիջոցների առավել թիրախային և հետևողական կիրառման արդյունքում ՌԴ տնտեսական աճ կտրուկ թուլացման ռիսկեր, հատկապես խստացող տնտեսական քաղաքականությունների պայմաններում: ❑ **<u>Անշարժ գույքի շուկայի ճշգրտման պայմաններում բացասական մակրոտնտեսական ազդեցությունների հետ կապվախ ռիսկեր</u>**. Շինարարության ոլորտի թողարկման և անշարժ գույքի գների աստիճանական նվազման (ճշգրտման) պայմաններում տնտեսությունում պահանջարկի թույլ միջավայրի ձևավորում ու խորացում: ❑ Գործազրկության մակարդակի որոշակի աճը, մասնավոր աշխատավարձերի աճի դանդաղումը, ինչպես նաև ոչ ներառական տնտեսական աճը, որն արտահայտվում է տնտեսության որոշ ոլորտներում եկամուտների կենտրոնացվածության բարձր աստիճանով, ցածր գնաճային միջավայրի պայմաններում անորոշություններ է պարունակում ներքին պահանջարկի պայմանների վերաբերյալ և պարունակում է **<u>բացասական պահանջարկի միջավայրի ձևավորման ռիսկեր</u>**՝ միջնաժամկետ հեռանկարում ունենալով շարունակական գնանկումային ազդեցություններ: ❑ **<u>Գնաճի՝ թիրախից ցածր մակարդակում ավելի երկար պահպանման</u>** հետևանքով գնաճային սպասումների ներքևի ուղղությամբ ճշգրտման, պահանջարկի հետաձգման և դեֆլյացիոն պարույրի առաջացման հնարավոր սցենարներ: ❑ **<u>Հարկաբյուջետային քաղաքականության դիրքի վերաբերյալ անորոշություն</u>**: Հարկերի հավաքագրման, սակայն դրան զուգահեռ ծախսերի կառուցվածքում պահանջարկի աճին չնպաստող ներդրումների (կապիտալ ապրանքների գնում)՝ սպասումների համեմատ ավելի բարձր աճի պարագայում, հարկաբյուջետային քաղաքականությունը համախառն պահանջարկի վրա կարող է ունենալ զգալի զսպող ազդեցություն: ❑ **<u>ՀՀ չեզոք տոկոսադրույքի և դրա տարրերի շուրջ անորոշություններ</u>:** Վերջին տարիների ընթացքում կապիտալի և բարձր արտադրողական աշխատուժի ներհոսքով պայմանավորված առկա են զգալի անորոշություններ արտադրողականության, երկարաժամկետ ներուժային աճի, հավասարակշիռ իրական փոխարժեքի արժևորման չափի, և դրանք պայմանավորող կապիտալ հոսքերի միջնաժամկետ կայունության ու միտումների վերաբերյալ, ինչը կարող է նպաստել ՀՀ-ում ավելի ցածր չեզոք տոկոսադրույքների ձևավորմանն ու պահպանմանը:
Առաջարկի զսպում. (Թողարկում - | Գնաճ +)	❑ **<u>Համաշխարհային արժեշղթաների խաթարումների հետ կապված ռիսկեր</u>**, մասնավորապես. • *Տարածաշրջանային հակամարտությունների (Մերձավոր Արևելք, Ռուս-ուկրաինական հակամարտություն) շարունակական սրացման համատեքստում՝* հավանական բացասական ազդեցություններով, այդ թվում, նավթի արդյունահանման և տեղափոխման տեսանկյունից, • Առաջատար տնտեսությունների կողմից միմյանց, և արտաքին աշխարհի նկատմամբ *արտաքին առևտրային քաղաքականությունների համակողմանի խստացման* համատեքստում կարճաժամկետ-միջնաժամկետ գնաճային սցենարներ ❑ **<u>Ռուսաստանի նկատմամբ թիրախային պատժամիջոցների շարունակական ավելացման պարագայում ՀՀ-ում արտաքին առևտրով շարժվող հոսքերի կտրուկ դանդաղում՝</u>** համապատասխան մակրոտնտեսական ազդեցություններով:	❑ **<u>ՀՀ-ում աշխատուժի առաջարկի աճի ռիսկեր</u>**: ՀՀ-ում և ՌԴ-ում աշխատավարձերի ճեղքի հետագա փոքրացմամբ և ՌԴ աճի հեռանկարների շուրջ բարձր անորոշություններով պայմանավորված դեպի ՌԴ **ՀՀ սեզոնային միգրացիայի նվազում:** ❑ **Տարածաշրջանում արտահանման լոգիստիկ ուղիների, և հետևաբար, առևտրային հոսքերի պարբերական խաթարումների պայմաններում**, հատկապես սեզոնային պարենային ապրանքների մասով ավելցուկային առաջարկի և գնանկումային ճնշումների ձևավորում: ❑ Միջնաժամկետ հորիզոնում համաշխարհային առաջատար տնտեսությունների կողմից միմյանց նկատմամբ **արտաքին առևտրային քաղաքականությունների խստացում** և, հետևաբար, միջազգային շուկայում ապրանքների և ծառայությունների ավելցուկային առաջարկի ու գնանկումային սցենարների ձևավորում:
Դպանջարկի զսպում. (Թողարկում - | Գնաճ -)		
Առաջարկի ընդլայնում. (Թողարկում + | Գնաճ -)		

Ընթացիկ և հիմնարար տնտեսական գործոններ

Համաշխարհային տնտեսության զարգացումներ

ԱՄՆ: Սպառումը ԱՄՆ-ում շարունակում է աճել բարձր տեմպերով՝ նպաստելով տնտեսական ակտիվության պահպանմանը.

ԱՄՆ-ում տնտեսության հիմնարարների շուրջ բարձր անորոշությունը շարունակում է պահպանվել

ՀՆԱ, եռ/եռ տարեկանացված, %



Աղբյուր՝ Տնտեսական Վերլուծություններ Բյուրո (BEA), Ատլանտայի ԴՊՀ

Սպառողական ակտիվությունը շարունակում է պահպանվել բարձր մակարդակում



Աղբյուր՝ ԱՄՆ ԴՊՀ, ԱՄՆ Բնակչության մարդահամարի բյուրո (US Census Bureau)

ԱՄՆ. Չնայած վերջին տարվա ընթացքում աշխատուժի առաջարկի և պահանջարկի հաշվեկշիռը էականորեն բարելավվել է, աշխատանքի շուկայից գնաճային ռիսկերը դեռևս պահպանվում են

Աշխատավարձերի աճը շարունակում է գերազանցել արտադրողականության և գնաճի թիրախին համահունչ աճի մակարդակներից



Աղբյուր՝ Տնտեսական Վերլուծություններ Բյուրո (BEA), Ատլանտայի ԴՊՀ,

Վերջին ամիսներին տնտեսության իրական հատվածում նոր ստեղծված աշխատատեղերի աճ է նկատվում

Հնարավոր ավելի խիստ միգրացիոն քաղաքականությունը կարող է զգալի ճնշում գործադրել դեռևս լարված աշխատաշուկայի վրա



Աղբյուր՝ ԱՄՆ միգրացիոն խորհուրդ (AMC)

ԱՄՆ. Քաղաքականության տոկոսադրույքի հետագծի վերաբերյալ շուկայի մասնակիցների սպասումները վերջին շրջանում էականորեն բարձրացել են.

Չեզոք տոկոսադրույքի մակարդակի վերաբերյալ վերագնահատումնե՞ր

Արդյո՞ք տոկոսադրույքների մակարդակի վերաբերյալ սպասումների աճը վկայում է չեզոք տոկոսադրույքի վերաբերյալ շուկայի գնահատականների վերանայման մասին...



Ընդհանուր և հիմնարար գնաճը բնութագրող ցուցանիշները պահպանվում են թիրախային մակարդակից զգալիորեն բարձր



Աղբյուր: ԴՊՀ, Ատլանտայի ՖՊՀ

ԵԳ. Տնտեսական աճի հեռանկարները և կառուցվածքը շարունակում են մտահոգիչ մնալ, հատկապես ԱՄՆ հետ առևտրային քաղաքականության խստացման և Չինաստանի տնտեսության աճի հետագա թուլացման ռիսկերի համատեքստում:

Որոշ կարճաժամկետ գործոնների չեզոքացումից հետո ՀՆԱ աճը կտրուկ թուլացել է



Աղբյուր: Eurostat

ԵԿԲ քաղաքականության երկընտրանքը խորանո՞ւմ է



ԵԳ աշխատանքի շուկայում նկատվում են թուլացման որոշակի ազդակներ, սակայն գնաճային ճնշումները դեռևս պահպանվում են



Աղբյուր: Eurostat

Չինաստան: Անշարժ գույքի շուկայի, և ընդհանուր առմամբ, ներքին պահանջարկի շարունակական թուլացումը մնում են համաշխարհային տնտեսության ավելի թույլ հեռանկարների վերաբերյալ հիմնական անորոշության աղբյուրներից

Չինաստանին թեև հաջողվեց ապահովել տնտեսական աճի 5% թիրախը, աճի հեռանկարները դեռևս մտահոգիչ են մնում



Չնայած տնտեսական աճի որոշակի արագացմանը, ներքին պահանջարկը մնում է թույլ:



Որոշ առաջանցիկ ցուցանիշներ ևս վկայում են հատկապես տնտեսության արտադրողական հատվածում առկա մարտահրավերների մասին



Աղբյուր: ՉԺՀ-ի ազգային վիճակագրության բյուրո

Թույլ գնաճային միջավայրը պահպանվում է



Աղբյուր: ՉԺՀ-ի ազգային վիճակագրության բյուրո

Ապրանքահումքային շուկաներ: ԱՄՆ կողմից ռուսական «ստվերային առևտրային նավերի» թիրախավորումը և պատժամիջոցների խստացումը կարող է նավթի շուկայում առաջարկի կրճատման աղբյուր դառնալ

Հունվարի 10-ի ԱՄՆ պատժամիջոցների արդյունքում ՌԴ նավթի արդյունահանումը ըստ տարբեր գնահատականների կարող է կրճատվել մինչև 1մլն բ/օր



2025 թ.-ի կանխատեսված ավելցուկը կարող է կլանվել ՌԴ-ի դեմ պատժամիջոցների ենթադրյալ/հավանական ազդեցության դեպքում, մբ/օր



Աղբյուրը: ՕՊԵԿ, EIA, IEA, Trading Economics,ԿԲ հաշվարկներ

Այդուհանդերձ, Բրենտի և Յուրալսի գների միջև տարբերության նշանակալի աճ դեռևս չի արձանագրվում



Աղբյուրը: ՕՊԵԿ, EIA, IEA, Trading Economics,ԿԲ հաշվարկներ

Ապրանքահումքային շուկա: ՌԴ-ի նկատմամբ վերջին պատժամիջոցները, ինչպես նաև համաշխարհային տնտեսության աճի միջնաժամկետ հեռանկարի շուրջ ռիսկերն ավելի խոցելի և տատանողական են դարձնում նավթի շուկան

Պատժամիջոցների հետևանքով շուկայական ավելցուկի կլանումը (Սցենար Ա) և համաշխարհային տնտեսության թույլ հեռանկարները (Սցենար Բ) նավթի գնի վերաբերյալ անորոշության հիմնական աղբյուրներն են



Աղբյուրը: EIA,ԿԲ գնահատականներ

Չնայած համաշխարհային տնտեսության աճի կանխատեսումը ընթացիկ տարվա համար փոքր ինչ վերանայվել է դեպի վեր, միջնաժամկետ աճի շուրջ ռիսկերը պահպանվում են



Աղբյուրը՝ Արժույթի միջազգային հիմնադրամ

Ապրանքահումքային շուկաներ: 2024 թվականի երկրորդ կեսում՝ անբարենպաստ եղանակային պայմանների արդյունքում նկատվող աճերից հետո պարենային ապրանքների գները միջազգային շուկաներում կայունացել են, այնուամենայնիվ առանձին շուկաներում առաջարկի և պահանջարկի հետ կապված անորոշությունները պահպանվում են:

Համաշխարհային պարենի գների ինդեքս, 2023 դեկտեմբեր= 100



Աղբյուր: FAO

Միջազգային պարենային շուկաներում նախորդ ամիսներին աճին հիմնականում նպաստում էին ձեթերի գները՝ պայմանավորված Ասիական երկրներում ոչ բարենպաստ եղանակային պայմաններով, ինչը սակայն դեկտեմբերին կայունացել է, որին էլ նպաստել է հիմնականում ԱՄՆ-ում որոշակիորեն թուլացած պահանջարկը:

Շաքարի համաշխարհային գների նվազումը պայմանավորված էր Բրազիլիայում նոյեմբերի երկրորդ կեսին սպասվածից բարձր արտադրությամբ:

Համաշխարհային տնտեսության աճի հետագա դանդաղման հետ կապված ռիսկերը պահպանվում են, ինչը որոշակի զսպող գործոն է հանդիսանում պարենի գների աճի համար:

ՌԴ: Բարձր ներքին պահանջարկի պայմաններում բարձր գնաճային միջավայրը պահպանվում է: Մյուս կողմից, աճի միջնաժամկետ հեռանկարի շուրջ ռիսկերը խորանում են՝ կապված նաև ԱՄՆ նոր պատժամիջոցների կիրառման հետ

Բարձր գնաճային միջավայրը պահպանվում է



Աղբյուր: ՌԴ ԿԲ

Վարկերի ծավալների աճի տեմպը սկսել է թուլանալ, տ/տ,%



ՌԴ «ստվերային առևտրային նավերի» արդյունավետ թիրախավորումը կարող է հանգեցնել մինչև ՀՆԱ-ի 1.2%-ի կորստի



Աղբյուր: Ռոսստատ, ՌԴ ԿԲ, ՀՀ ԿԲ գնահատականներ

Համաշխարհային տնտեսության հետ կապված հիմնական անորոշությունների աղբյուրները

ԱՄՆ

- Անորոշություններ երկարաժամկետ (չեզոք) տոկոսադրույքների մասով
- Հնարավոր, ավելի խթանող հարկաբյուջետային քաղ.-ը լրացուցիչ անորոշություններ է ստեղծում պարտքի մակարդակի և կայունության վերաբերյալ
- Արտաքին առևտրային և միգրացիոն քաղաքականությունների խստացումից բխող ռիսկեր

ԵԳ

Տնտեսական աճի հեռանկարների, տնտեսության կառուցվածքի և հիմնարարների հետ կապված անորոշությունը պահպանվում է:

Չինաստան

Չնայած 2024թ.-ի վերջում տնտեսական աճի արագացմանը, անշարժ գույքի շուկայի, ֆինանսական կայունության և պահանջարկի հետագա թուլացման ռիսկերը պահպանվում են:

ՌԴ

- Գնաճային սպասումների շարունակական արագացման պայմաններում ներքին բարձր պահանջարկը պահպանվում է:
- Առավել նպատակային և ճկուն արևմտյան պատժամիջոցները շարունակում են ՌԴ տնտեսության և երրորդ երկրների համար որոշակի ռիսկեր պարունակել:

Ապրանքահումքային շուկաներ

Աշխարհաքաղաքական, ՌԴ նկատմամբ պատժամիջոցների, եղանակային և առևտրային ռիսկերի հետագա սրումը պարունակում է համաշխարհային արժշղթաների խաթարման, նավթի համաշխարհային գների հետագա աճի և տատանողականության ավելացման ռիսկեր:

Ընթացիկ և հիմնարար տնտեսական գործոններ

Ներքին տնտեսության զարգացումներ

ՀՀ ռիսկի հավելավճարը շարունակում է ձևավորվել երկարաժամկետ կայուն մակարդակից էականորեն ցածր...

Տրածաշրջանային և ՀՀ շուրջ աշխարհաքաղաքական հակամարտությունների հնարավոր սրացման ռիսկերով պայմանավորված տարածաշրջանի երկրների և ՀՀ սուվերեն ռիսկի հավելավճարների արագ ճշգրտման ռիսկեր.

ՀՀ Եվրոպարտատոմսերի եկամտաբերությունն ավելի արագ է նվազում զարգացող երկրների համեմատությամբ՝ պայմանավորված որոշ երկրին/տարածաշրջանին բնորոշ ռիսկերի թուլացմամբ



Վերջին շրջանում, պայմանավորված Մերձավոր Արևելքում իրավիճակի բարելավմամբ, ՀՀ երկրի կարճաժամկետ ռիսկ հավելավճարը նվազել է



Աղբյուրը՝ Bloomberg, ՀՀ ԿԲ հաշվարկներ

Տնտեսական ակտիվությունը ձևավորվում է աճի երկարաժամկետ կայուն մակարդակի շուրջ:

Աճի տատանողականության մեծացումը պայմանավորված է վերաարտահանման գործընթացներով

Տնտեսական ակտիվության ցուցանիշ (ՏԱՑ), %



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ և ՀՀ ԿԲ գնահատականներ

Տնտեսական ակտիվությունն ըստ ճյուղերի, իրական աճ, տ/տ, %



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ

Պահպանվում են զգալի անորոշությունները արտաքին առևտրով պայմանավորված հոսքերի կայունության և դրանց հետագա թուլացման պարագայում հավանական ազդեցությունների բնույթի և չափի վերաբերյալ

Արտահանում ըստ հոսքերի ուղղությունների, մլն դոլար



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ, ՀՀ ԿԲ գնահատականներ

Ներմուծում, մլն դոլար



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ, ՀՀ ԿԲ գնահատականներ

Մյուս կողմից, արտաքին առևտրային հոսքերի թուլացմանը զուգահեռ, մշակող արդյունաբերության «ավանդական» ճյուղերում շարունակում են արձանագրվել աշխուժացման որոշակի դրական ազդակներ

Մշակող արդյունաբերության աճն արագանում է՝ հիմնականում սննդի արդյունաբերության թողարկման աճով պայմանավորված



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ, ՀՀ ԿԲ գնահատականներ

Մշակող Արդյունաբերության վերականգնմանը հիմնականում նպաստում են ծխախոտի և պատրաստի սննդի ճյուղերի աճը



Մշակող արդյունաբերութուն. որոշ ապրանքախմբերի արտահանումը



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ

Այդուհանդերձ, երկարաժամկետ ներուժային աճի ընդլայնման ուղղությամբ ռիսկերը պահպանվում են

Կապիտալ ապրանքների ներմուծում



Շինարարությունը մշակող արդյունաբերությունում



Զբաղվածությունը մշակող արդյունաբերությունում



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ

Վարկավորումը մշակող արդյունաբերութունում և դրա առնձին ճյուղերում



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ

Շինարարության ոլորտի թողարկման և անշարժ գույքի գների աստիճանական նվազման (ճշգրտման) պայմաններում տնտեսությունում պահանջարկի թույլ միջավայրի ձևավորման ու խորացման ռիսկերը պահպանվում են

Թողարկում, իրական տ/տ աճ



Հիպոթեքային վարկերի զուտ հոսքեր, մլրդ ՀՀ դրամ



Երևանում և ՀՀ մարզերում շահագործման հանձնված բնակելի գույք



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ, ՀՀ Կադաստրի կոմիտե

Անշարժ գույքի գների աճը զգալիորեն դանդաղել է, ք. Երևան



Աղբյուրը՝ ՀՀ Կադաստրի Կոմիտե

Արտաքին պահանջակի կարգավորման միտումները պահպանվում են: Մի կողմից որոշակիորեն թուլացել է դեպի ՀՀ զբոսաշրջային հոսքը, ինչն արտահայտվում է նաև առանձին ծառայությունների գների համապատասխան ճշգրտմամբ...

Ժամանող զբոսաշրջիկներ, 1000 մարդ, կուտակային



Փաստացի վճարվող վարձավճար բնակարան վարձակալողի կողմից լրացուցիչ բնակատեղիների համար



Սահմանահատումներ (ՌԴ), զուտ ներհոսք, կուտակային



Աղբյուրը՝ ՀՀ Զբոսաշրջության պետական կոմիտե

Հյուրանոցային ծառայություններ



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ

Մյուս կողմից, ՀՀ-ում և ՌԴ-ում աշխատավարձերի ճեղքի փոքրացումը և ՌԴ-ում միգրացիոն քաղաքականության խստացումը, ինչպես նաև փաստացի դրամական փոխանցումների կրճատումը կարող են վկայել դեպի ՌԴ միգրացիոն հոսքերի նվազման մասին

Ֆիզ. անձանց ոչ առևտրային փոխանցումները ՌԴ-ից (ներհոսք)



ՀՀ և Ռուսաստանի շինարարության ճյուղերում միջին աշխատավարձերի տարբերությունը



Աղբյուրը՝ Ռոսստատ, ՀՀ ՎԿ, ԿԲ հաշվարկներ

Այդուհանդերձ, տրանսֆերտների նվազմանը զուգընթաց նկատվում է ռեզիդենտների կողմից Ռուբլով փոխարկումների էական աճ...

Աշխատանքային միգրացիայի նվազում, թե՞ կանխիկ ներհոսքի աճ...



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ

Բանկային համակարգի բարձր իրացվելիության (այդ թվում արտարժութային) և պահանջարկի առկայության պայմաններում, ռիսկեր կան վարկավորման բարձր աճերի պահպանման համար, խթանելով ներքին պահանջարկի հետագա ընդլայնումը

Ընդհանուր վարկեր տնտեսությանը



Աղբյուր՝ ՀՀ ԿԲ

Ներմուծում



Մանրածախ առևտուր



Աղբյուր՝ ՀՀ ՎԿ

Հարկաբ. քաղաքականություն: Մի կողմից եկամուտների թերակատարման, մյուս կողմից ծախսերի (հատկապես կապիտալ) կառուցվածքի և դրանք իրականացնելու կարողությունների շուրջ ռիսկերը ստեղծում են ՀԲՔ ազդեցության վերաբերյալ բարձր անորոշություն

Կապիտալ ծախսերի զգալի թերակատարումը ռիսկեր է պարունակում նաև երկարաժամկետ ներուժային աճի տեսանկյունից

2024թ.-ին հարկային եկամուտներ/ՀՆԱ ցուցանիշը ծրագրի նկատմամբ թերակատարվել է շուրջ 1,3 տոկոսային կետով՝ ձեւավորելով նաև որոշակի ռիսկեր 25թ.-ի ծրագրի կատարման տեսանկյունից



Կապիտալ ծախսերի կառուցվածքը ՀԲՔ ազդեցության վերաբերյալ բարձր անորոշություն է ստեղծում



ՀԲՔ հավանական ազդեցության սցենարներ



**Սցենար 1 – հարկային եկամուտների աճ՝ հիմնված 2024թ.-ի փաստացի ցուցանիշների վրա*
**Սցենար 2 – ծախսերի աճ՝ հիմնված 2024թ.-ի փաստացի ցուցանիշների վրա*
**Սցենար 3 – սցենար 2 + կապիտալ ծախսերից զտելով պաշտպանական ծախսերի որոշ մասը (լրացուցիչ մոտ 100մլրդ դրամ)*

Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ, ՀՀ ԿԲ գնահատականներ

Աշխատանքի շուկա: Չնայած աշխատանքի շուկայի պայմանների շուրջ անորոշությունը պահպանվում է, աշխատաշուկայի մի շարք լրացուցիչ ցուցանիշներ ևս փաստում են, վերջին շրջանում, պայմանների որոշակի թուլացման մասին

Գործազրկության մակարդակ և աշխատավարձերի աճ, %



Աշխատանքի պայմանների թուլացումը արտացոլվում է նաև օնլայն հարթակներում՝ աշխատանքի հայտարարությունների քանակի նվազմամբ՝ դրան զուգահեռ դիմումների կայուն աճով:



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ, Staff.am

Աշխատանքային ռեսուրսների փոփոխությունը, 2024Q3/2023Q3, հազար մարդ



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ

Գնաճ: Չնայած դեկտեմբերին արձանագրված որոշակի ավելացմանը՝ ՀՀ-ում ընդհանուր գնաճային միջավայրը շարունակում է մնալ թույլ՝ մեծամասամբ ներմուծվող ցածր գնաճի արդյունքում

Գնաճի և հիմնարար գնաճի ցուցանիշները



Թույլ գնաճային միջավայրը մեծամասամբ վերագրվում է ներմուծված ոչ պարենային և տեղական պարենային ապրանքներին



Ներմուծված պարենային ապրանքների գնաճը շարունակել է ավելանալ՝ համաշխարհային գնաճին համահունչ:

Ցածր գնաճային / գնանկումային միջավայրը Չինաստանում արտացոլվում է նաև ՀՀ ներմուծված ոչ պարենային ապրանքների գներում:

Տեղական պարենի մասով, նույնիսկ նոյեմբերին տեղի ունեցած ճշգրտումներից հետո գնաճը պահպանվել է սեզոնի համեմատ որոշակիորեն ցածր մակարդակում:

Չկարգավորվող ծառայությունների գնանկմանը գրեթե ամբողջությամբ նպաստել են օդային տրանսպորտի և վարձակալության գների որոշ ճշգրտումները (արտաքին պահանջարկի թուլացում?):

Ծուկայի Սպասումներ

Ներքին տնտեսության զարգացումներ

Ֆինանսական շուկաների սպասումների փոփոխությունը ԴՎՔ վերջին որոշումից հետո

Քաղաքականության տոկոսադրույքի վերաբերյալ սպասումներն ըստ ֆինանսական շուկաների հարցման արդյունքներ



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ ֆինանսական շուկաների հարցում

Քաղաքականության տոկոսադրույքի ակնկալվող փոփոխությունը 2025 թ-ի փետրվարի որոշման արդյունքում



Քաղաքականության տոկոսադրույքի ակնկալվող մակարդակը 2025 թ-ի դեկտեմբերին



Եկամտաբերության կորի կարճ հատվածը դեկտեմբերի որոշումից հետո որոշակիորեն տեղաշարժվել է ներքև, իսկ կորի երկար հատվածը՝ ինչը առավելապես արտահայտում է տնտեսության հիմնարարների զարգացումները, պահպանվել է նույն մակարդակում



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ

Քաղաքականության քննարկում

Քաղաքականության քննարկում